«...և արարին խորհուրդ, — գրում է Զաքարիա Սարկավագը, — և եդին գլխաւոր ինքեանց զոմն Ֆաթալի անուն, և անուանեցին զինքեանց Ղարափաչայ։ Եւ խորհեցան զկորուստ խանին՝ ասելով սա... ասէ, յաւուրս անձրևի քրիստոնեայք մի ելցեն արտաքս. մեք ահա գրացի եմք քրիստոնէից և խառն ի խուռն կամք ընդ նոսա. առևտուր ի միասին լինի, և շահս բազումս ունիմք ի նոցանէ և սա կամի զրկել զմեզ ի շահից մերոց։ Եւ զի, ասէ, յաղօթարանս քրիստոնէից մուսրման մի մտցէ. արդ զամենայն ցաւագարս մեր եկեղեցիքն բժշկեն. այլ և տեղի զրօսանաց մերոց եկեղեցիքն են. զմեռեալս թարց հրամանաց իմոց ասէ՝ ոչ թաղել, ապա ուրեմն հարկս կամի առնուլ ի մեռելոց։ Եւ զգողս ոչ պատժէ, այլ առնու տուգանս՝ և թողու. և նոքա դարձեալ առնեն գողութիւն։ Զայս և այլ բազում չարիս նորա գրեցին և ձեռամբ թագաւորական ծառայի առաքեցին առ շահն և ինքեանք յարեան ի վերայ խանին և մուծին ի տուն, և ոչ թողին ելանել արտաքս։ Այլ և կնքեցին զամենայն գրուանս ամբարացն և չափով տային զկերակուր նորա։ Եւ այսպէս տառապանօք պահեցին զնա մինչև եկն այլ խան և զնա հալածեցին և ելեալ գնաց յԱսպահան և երկիրս մնաց խաղաղ»[1]։

Հակոբ Ջուղայեցու և իր գործակիցների հայ վաճառականության ու մելիքների համար ավելի քան պարզ էր դառնում, որ փրկության միակ միջոցը երկրի շուտափույթ ազատագրումն էր պարսկական լծից։ Նույն օրերին, երբ Երևանում տեղի էին ունենում վերը նկարագրված դեպքերը, էջմիածնում գումարվում էր գաղտնի ժողով, ուր քննարկվում էր երկրի ազատագրման հարցը։

Ինչպես գիտենք, ազատագրական այս ձեռնարկը սկիզբն էր շուրջ 150-ամյա այն հերոսական պայքարի, որ մղեց հայ ժողովուրդը, և որը ի վերջո, շնորհիվ ռուսական պետության ու ժողովրդի օգնության, հայ ժողովրդի Արևելյան հատվածի համար պսակվեց հաջողությամբ։

Պատմական Հայաստանի մի զգալի մասը կարողացավ թոթափել իրանական ասիմիլյատորների ծանր լուծը և մտավ զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող ռուսական պետության հովանու տակ։

---

[1] Զաքարիա Սարկավագ, հատոր 2, էջ 90։